

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հար 8 ՄԼՃ
ձ Գաւառաց 10 ՄԼՃ
Վ Կապուկայ և Պոլսոյ 4 ՄԼՃ
ձ Գաւառաց 3 ՄԼՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ
յանուցման տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կը լլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 7 դեկտ.

Չարիտական օրինակներ են ա-
մեն կաղանկան օրինակներ մեր ժողովուր-
դի հետեւին, որոնք մեր ազգային ժո-
ղովոյ լուծումն ըլլայ:

Փարիզի քաղաքապետական խոր-
հրդին մնացեալ հինգ ընտրելի ան-
դամն քուէարկութիւնը կատար-
ւելով, չորս պահանջականք և մէկ
հանրապետական ընտրուեցան:

Բեքարպուրի 7 հոկտ.

Կոյսն հրաման ըրաւ որ համալ-
սարանաց մէջ ծագած անկարգու-
թեանց և յուզմանց վրայ կառավա-
րական քննութիւն մ'ըլլայ:

Հոռոմ 7 դեկտ.

Կը հաւաստեն թէ կարիպալտի
ազգային ժողովոյ սահմանած 100000
ֆրանքի տարեկան թոշակը չընդու-
սիր:

Վալինիթը 7 դեկտ.

Երեսփոխանական ժողովոյ բաց-
ման առթիւ կրանթ նախագահին
ղրկած պատգամագիրը կրտէ թէ օ-
տար տէրութեանց հետ յարաբե-
րութիւնը յոյժ բարեկամական են,
ի բաց առեալ վէճերու վրայ և Սպա-
նիոյ հետ ծագած վէճերը: Կը կարծէ
թէ ֆուպայի վիճակը միջազգային մի-
ջամտութիւն մը յառաջ պիտի բերէ:

Ներքին գործոց նկատմամբ պատ-
գամագիրը 1866էն սկսեալ մետաղ-
եայ դրամով վճարում և Պանքայի
ազատութիւն կ'ապաքէ, և կը յայտ-
նէ թէ նախագահն Հարաւային նա-
հանգաց նկատմամբ մի և նոյն աշ-
խարհակարութիւնը պիտի շարունա-
կէ մինչև ցնոր երեսփոխանական ժո-
ղովոյ ընտրութիւնը:

Ելուստից նախարարն 1873էն 1875
ի ելուստից հաշուեցոյցերը ներկա-
յացուց, որոց երկուքն ալ տարին 20
միլիոն տուրքի հաստութիւն առաւելու-
թիւն ցոյց կուտան, հին պարտուց
վճարման համար 32 միլիոն տուրքի
դուար մը վար երթալէ ետեւ:

Սինկաբուր 1 դեկտ.

Ճարտնցիք ամսոյ 3 ին ֆորմոզ
կղզիէն պիտի քաշուին:

Ճարտնի ջուրերուն մէջ պտըտող
Սմերիկեան պատերազմիկ շոգենա-
ւաց թիւը 15ի հասաւ:

Փարիզ 8 դեկտ.

Ազգային ժողովոյ անանական նո-
րոգման դադարիտն յառաջ երթա-
լու երեւոյթ ունի:

Պէրլիտ 8 դեկտ.

Նոր նախարարութեան խորհրդոյ
նախագահն իր անդամակիցներն ազ-
գային ժողովոյ ներկայացնելէ ետեւ
ծանոց թէ կառավարութիւնը մամ-

լոյ ազատութեան, անձնական իրա-
ւանց և քաղաքային ինքնօրինու-
թեան վրայ օրէնքներ պիտի ներ-
կայացնէ:

Ազգային ժողովն 'ի պատասխա-
նի իշխանին ատենախոսութեան պատ-
րաստում ուղերձն առանց վիճա-
բանութեան ընդունեց և իւր նիստե-
րը մինչև վեց շաբաթ դադարեցուց:

Լոնտոն 9 դեկտ.

Ռոյալ Բոնո 44 1/8—3/8
Բոնո 1865 68
» 1869 54 3/4
» 1871 63 1/4—3/4
» 1872 84 1/2—85
» 1873 51 1/2—3/4
Նոր փոխառութիւն 1
Անգլ Բոնո 92 1/8
Իլիւրբուր 9 դեկտ.
Բամպակ Միտլինկ—Օրդէան 7 7/8—8
» Ֆայր Տօլէրան 5—
Ծախուած 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ
Ելուստից պաշտօնատան քարտու-
ղար եւ արտաքին թղթակցութեանց
դիւանին դուրս փէրէստէճեան Մեծ.
պաշտօնատնից քաղաքացիական
պաշտօնավարութեան աստիճան արը-
ւեցաւ:

Բարձրագոյն Մեծ Եպարքոսի
դատերը վախճանեալ Հասկա փաշայի
որդւոյն էլընֆ պէյի հետ ամուս-
նութիւնը քիչ օրէն կատարուելու
վրայ ըլլալով, վեհ. Սուլթանը 7000
լիրա արժողութեամբ ակնանկու-
ղբու մ'ընծայ զրկեց մանկամարդ-
հարսնացուն:

'ի նպատակ մնացորդի սովորեց
կեդրոնական մասնաժողովոյ անտու-
կին տրուած հանգանակութեանց
դուարը 53646 լիրայի հասած է:

Կրուսի թէ ծխախոտի մատակա-
րարութեան (Բէթի) դադարի տեսուչ-
ները նոյն իսկ մատակարարութեան
գառմը փաշայի միջերանոցին մէջ
մեծ քանակութեամբ մաքու փա-
խած ծխախոտ գտած ըլլալով, միջե-
րանոցին տնօրէն իղլէթ էֆէնտին
հարցաքննութեան ենթարկուեց է:

Անցեալ շաբաթ դիւեր մը Շահ-
զաւէ Պաշի թաղին մէջ ոտականու-
թեան զինուոր մ'ապանող Երուսա-
ղէմի տաճիկ ոստիկանը մ'այս ա-
ռաւօտ իջնիստայի կամրջին գլուխը
կախուեցաւ:

Մէտէնիթ լրագրին մէջ կը կար-
դանք թէ ուրաթ դիւեր Ղալաթա
Սարայի նախապետարանական վար-
ժարանին երկրորդ և երրորդ կար-
գի աշակերաններն իրարու հետ կը
ւելով, 15ի չափ աշակերտք վերա-
ւորուեց են, որոց հետ նաեւ երկու
զինուոր, որք կուրը դադարեցնելու
կոչուած էին:

Հետեւեալ օրը վարժարանին վե-
րադասին հրամանաւ քննութիւն
բացուելով կուրն սկիզբնապահաւ
և գրգռիչ եղող քանի մ'աշակերտք
բանտարկուեց են:

Եաֆայէն կը դրեն թէ անցեալ
շաբթու բուռն միջոցներ ելնելով
վեց առագայտանաւ Աքայի և Գա-
զայի առջև ցամաքն ինկեր խորտա-
կեց են:

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԻ
27 նոյ. չորեքշաբթի իրկուն 49.43
28 » հինգշաբթի առաւօտ
բացուեցաւ 49.49
49.23
Կէս օր

Կ. Պոլսի 27 նոյ.

Սօրիթէ մէնէրայի բաժինը Անգլ. Լիր 8.40
« փոխանակութեան » 5.26
Կ. Պոլսոյ Պանքային » 6.10
Բոնոյ մէնէրայ » 11.40
Բոնոյ Օսթրո—Թուրք
Երկարութեան հին Ֆր. 125.25
Փոխ. 1863 » 345
» 1865 » 350
» 1869 » 274 1/2
» 1873 » 264 50

Թրամաւ 3
Օսմ. Լիր 5
ԸՆԴՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ
27 ՆՈՅԵՄԲԵՐ
Անգլ. Լիր 440.30
Նոյս օր 87.30
Եւրոպայի Լիր 89.40
Գ. Բոնոյ » 51.22
Հինգ ֆրանք »
Հինգից » 104.20
Պրիմ » 128.40

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն Ս. Պատրիարք Հայրն անց-
եալ ուրաթ օրն Երուսաղէմայ Պատ-
րիարքական փոխանորդ Գեր. Սի-
մէոն Սրբազանի, Բաղ. ժողովոյ ատե-
նապետ Մարտիրոսեան վսեմ. Սիմէոն
պէյի և Գաբու ընհետեւ Արքահա-
մէֆէնտին հետ Երուսաղէմայ նորոն-
տիւր կառավարիչ վսեմ. Ալի պէյին
այցելութեան գնացած ըլլալով, շա-
բաթ օրն ալ Նորին վսեմութիւնը
փոխադարձ այցելութեան եկաւ Ս.
Պատրիարք հօր:

Վսեմ. Ալի պէյ արդէն տակեց
քանի մը տարի առաջ Երուսաղէմայ
կառավարչութիւն ըրած և անաչառ
արդարատիւութեան փորձեր տուած
ըլլալով, սիրելի է յուսալ որ Երուսա-
ղէմի մէջ Հայոց բռնաբարեալ իրա-
ւունքներն արդարապէս պաշտպա-
նութիւն կը դառնան Նորին վսեմու-
թեան:

Երկուշաբթի օրը վսեմ. Արքահա-
մէֆէնտին անուան տօնն ըլլալով, Ս.
Պատրիարք Հայրն իրկունը շնորհա-
ւորութեան գնաց Նորին վսեմութեան
'ի Բերա, և ազգային Պատրիարքոս-
րանի պարտուց բարձման համար Նո-
րին վսեմութեան ըրած մեծ շնորհին
փոխարէն Ազգային ժողովոյ յայտ-

նած շնորհակալութիւնն ալ այս առ-
թիւ Նորին վսեմութեան հաղորդեց:

Կրկնեք թէ կրկնեք Ամեն Ս. Մկրտիչ
Կաթողիկոսը Կեդրոնական վարչու-
թեան ուղղած ինչ ինչ առաջարկու-
թեանց ապարդիւն մնալուն պատճա-
ռաւ հրաժարական զրկեց է:

Վաղուց 'ի վեր գրեթէ ընդհա-
նուր կարծիք մը կար ազգին մէջ
թէ վեհապետ Միթիարեանք Հայ-
կաթոլիկ կղերին ազատամիտ կամ դո-
նէ համեմատաբար նուազ մարդանո-
մաւը կը կազմէին. այս կարծեաց սխալ
ըլլալը որ 1853 ին առաջին անգամ
հասկցուած էր, այս օրերս կրկին հա-
տատուութիւն կը դառնէ Հասունեանց
և Հակասունեանց մեծ կուրն առ-
թիւ, և ընտել երկրային չըթո-
ղուր, որ Կաթոլիկ կղերին ամենէն
մարդանոց կամեալապաշարեալ մասը
Քօլէճցիներէն ետեւ՝ Վիեննայի և Վե-
նետոյի Միթիարեանց մէջ պէտք է
փնտռել:

Կանգնեցնելու վեհապետ Միթիար-
եանէն վարդապետը վարդապետը
'ի մեծ զարմանալ Կաթոլիկ հայոց լու-
սամիտ մասին տեսնուեցաւ որ յիշ-
եալ վարդապետը վախճանին մօտ լու-
տին կրտսեւոր մը կանչել տալով Հա-
տունեանի դէմ սպաստամբ ըլլա-
լուն վրայ դրով զընում յայտներ և
մեղայ դռնելով թողութիւն ինքզին-
էր Պապին:

Այս օրերս ալ Շարք լրագրին մէջ
Հիւրմիւղեան Երուսաղէմ Գերապայ-
ժառի մէկ յայտարարութիւնը կը
տեսնուի, որով յիշեալ Գերապայժա-
ռը Պապին անխաղաղութիւնն ըն-
դունելով անոր ամեն հրամանաց և
ակնարկութեանց ինչպէս նաեւ Բէյլէր-
սուրուս անուն կոնդակին մէջ պարու-
նակեալ հրամանաց և կանոնաց ամե-
նահաւ և ամենահաղադար հաւա-
տացեալ կը դաւանի զինքը, և Հա-
կահատունեան Կաթոլիկ հայերն իբրեւ
հերձուածու և մեղքեալ կը դատա-
պարտէ:

ՈՐԱԳԻՐ Ի ԾՈՒՂԱԿԻ

Ասկէ առաջ յօդուածով մ'ըսած
էինք թէ՝ Որադիր փափաղեան ըլլ-
տեփան էֆէնտինի նկատմամբ ասոր
անոր դադարեց մը յայտնած է:
Գաղտնիք մը կաշտակերութեան
և ըսած է թէ՝ յիշեալ էֆէնտին կամ
ինքնին և կամ իւր միւս ընկերնե-
րով Մամբրէ եպիսկոպոսի առաւտա-
ձեռնած դրամը կու տուեր է, ա-
ռանց մէջէն Որադիր բաժինը հանե-
լու:

Դիտենք արդէն որ այն ծանրա-
կը իւր ամբաստանութիւնն ընող Ո-
րադիրը՝ այդ պարտած խաբէրին
անդամ դառնալու պատճառ ունի,
և վերջին օրերս ալ հրապարակին վր-

